ՀԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՒՆԱԶԱՐԴ ԽԵՑԵՂԵՆ

(Հայաստանի պետական պատմական թանգարանի պատահական գյուտերից)

Դ. Ա. ՏԻՐԱՑՅԱՆ

Տարիների ընթացքում Հայաստանի պետական պատմական թանգարանում (ՀՊԹ) և, մասամբ, Վրաստանի թանգարանում գոյացել է պատահական գյուտերի՝ գունազարդ կավանոթների մի հավաքածու, որի թվագրումը որոշակի դժվարություններ էր հանդիպում անցյալում։ Սովետական Հայաստանի մի շարք վայրերում (Դառնի, Արմավիր, Դվին) վերջին տարիների սիստեմատիկ պեղումների շնորհիվ հայտարերված ուշագրավ նյութերը, ինչպես նաև այդ կապակցությամբ արված շերտագրական դիտողությունները հնարավորություն են ընձեռում նոր տեսանկյունից մոտենալու վերոհիշյալ իրերին։

Մինչև 1956 թ. Դառնի ամրոցի տերիտորիայում հայտնաբերվել էին գոտեզարդ խեցեղենի բեկորներ, որոնք նմանեցվեցին Ղրիմի Խերսոնես քաղաքի հելլենիստական նույնատիպ խեցեղենին։ 1957 թ. Դառնիի ամրոցի պարսպի ներսից, մեծ խորության վրա հայտնաբերվեցին մի մեծ, հաստափոր, գունազարդ անոթի բեկորներ, որոնք ըստ Բ. Ն. Առաքելյանի ն. մ. թ. III—II դարերից են։

1960 թ. Հացավանում պեղումներ սկսելուց ի վեր, գունազարդ խեցեղենը ուշադրության կենտրոնում էր, և դա հնարավորություն տվեց անցկացնել այդ նյութերի՝ հելլենիստական նշանավոր կենտրոնների խեցեղենի հետ ունեցած առաջին զուգահեռները[2]։ Գունազարդ կավանոթներ սկսեցին երևան գալ 1962 թ. Արմավիրում և վերջին տարիներս Դառնիի[3] պեղումների ընթացքում։ Այս նյութերի ուսումնասիրությունը թույլ է տալիս վերաթվագրել և արժեքավորել պատահական գյուտերի շնորհիվ ի հայտ եկած գունազարդ խեցեղենը՝ որից մինչև այժմ ծանոթ են մոտ երկու տասնյակի հասնող տմբողչական կավանոթներ և մեծ ու փոքր բեկորներ։

№ 556—17 անոթը բերված է էջմիածնի թանգարանից և ՀՊԹ-ի մայր մատյանում դրանցված է որպես Կարմիր վանքի տիպի խեցեղեն (չափերը՝ բարձրությունը 13 սմ, ամենալայն տրամագիծը 12 սմ) (Տախտակ, I, 3)։ Անոթը առանց կանթի է, հաստափոր, համաչափորեն դեպի վեր նեղացող պատերով, որոնք անցնում են դեպի վիզը և դուրս ծռվող շուրթերը։ Հատակի մասում այն ցածր, կլոր ոտք ունի։ Անոթը պատրաստված է դուրգի վրա, նրբախեցի է՝ խմորը մարուր, թրծված բարձր որակով։ Արտաքինից անոթի մակերեսը պատած է օխրագույն անգորով, որի վրա սրճագույն զարդեր են արված։ Իրանի ամենալայն մասով չորս զուգահեռ գոտիներ են անցնում։ Նման գոտիներ կան նաև անոթի վերևի մասում, վզի և շրթի վրա։ Գոտիների միջև ընկած տարածության վրա, սխեմատիզացիայի ենթարկված, այծերի և մի փոքր կենդանու երթ է պատկերված։ Առաջին հայացքից անոթը նման է հելլենիստական ժամանակի խեցեղենի, բայց մոտիկից ծանոթանալով տեսնում ենք, որ այն իր յուրահատուկ ձևով և այծակերպ զարդերով հարազատ է խեցեգործության ավելի վաղ շրջափուլերին։ Փոքր Ասիայի հնագույն նյութերը այս տեսակետից հարցին չեն օգնում, քանի որ կավանոթների ձևերը միանգամայն տարբեր են

---

[1] Г. А. Тирацян, Материальная культура Армении первых веков и. э. по данным некрополя и бани в Гарни, Л., 1956 (рукопись), *էջ 148։*

[2] *Գ. Տիրացյան, Հացավան ամրոցի 1961 թ. պեղումները, «Տեղեկագիր», 1962 թ. № 11, էջ 83—84, նկ. 5, նույնի «Հացավան ամրոցի 1962 թ. պեղումները», «Տեղեկագիր», 1963, № 12, էջ 106—108, նկ. 5։*

[3] Г. А. Тирацян, О расписной керамике Древней Армении, «Историко-филологический журнал», 1965, № 3, *էջ 265—280։*

(էդեյական և խեթական տիպեր), իսկ նման զարդեր (այծեր) հանդիպում են խիստ ոճավորված տեսքով (փոյուգիական գունազարդ խեցեղեն)։

Շատ ավելի արդյունավետ է, սակայն, Իրանական սարահարթի գունազարդ խեցեղենի հոչակավոր կենտրոնների՝ Թեփե Սիալկի, Թեփե Գիյանի, Շոշի (Սուզա) նյութերի ուսումնասիրումը։ Ճիշտ է, այստեղ ևս հար ու նման ձևեր չեն հանդիպում. բայց այծերից կազմված գոտիները համատարած են, թեպետ որոշակի տարբերություններ կան այծերի վերարտադրման մեջ։ Այնուամենայնիվ կարևոր է, որ նշված կենտրոնների կավանոթների մեջ հանդիպում են բարակ խեցիով, ամեն տեսակի գոտիներով զարդարված նմուշներ, որոնք հուշում են, Իրանի էնեոլիթյան և բրոնզեդարյան խեցեղենի որոշակի աղերսների մասին տվյալ անոթի հետ։

Հետաքրքիր են տիպաբանական նմանությունները, որոնք կարելի է հաստատել այս անոթի և Իրանի այլ կետերից հայտաբերված խեցեղենի միջև։ Այսպես, օրինակ, Ուրմիայի լճից ոչ հեռու, Ուշնույի բարձունքում գտնվել է հնագույն շերտերին վերաբերող մի անոթ, հատակին ոտք, որը իր ընդհանուր ձևով բավականին նման է Քանգարանի օրինակին[4]։ Քիչ պակաս նման, բայց նույն տիպի անոթ գտնվել է Մաուլիլ-բակում՝ Լուրիստանում[5]։ Նույն Լուրիստանից հայտնի է հետաքրքիր զուգահեռ՝ ընդհանուր գծերով նման, բայց քիչ ավելի ցածրադիր[6]։

Այս բոլորից հետո պարզ է, որ քննության առնված կավանոթը վերաբերվում է նախահելլենիստական մի հնագույն ժամանակաշրջանի (հավանաբար II հազ.) և որոշակի աղերսներ ունի Իրանական սարահարթի գունազարդ խեցեղենի հետ։

№ 2129/157 և № 777/11 անոթները բերված են Արմավիրից (տախտակ 1, 1,2 և նկ. 1,2)։ Առաջինը հրատարակել է Ս. Տեր-Հակոբյանը, որը տեղեկացնում է, որ այն գտել են Արմավիրբլուրի շրջակայքի բնակիչները[7]։ Մի ուրիշ, ավելի շքեղ անոթ, պահվելիս է եղել Ղուրդուզուլիում (այժմ Արմավիր), բայց չի հաջողվել իմացիր բերել։ Հրատարակված անոթը բարձր է, տափակ հատակով և աստիճանաբար լայնացող պատերով, որոնք անցնում են կարճ վզին և դեպի դուրս թեքվող ցածր շրթերին (չափերը՝ 21×11 սմ)։ Այն ունի, հաստ պատեր, պատրաստված է ոչ այնքան մաքուր կավից և անհամաչափ է թրծված. Անոթը ծանր, զանգվածային է և աչքի է ընկնում իր գունազարդերով։ Նրա ամբողջ մակերեսը արտաքինից, ինչպես նաև շրթի և վզի մի մասը ներսից, ծածկված է մուգ կարմիր ներկի թանձր շերտով, որը լավ փայլեցված է։ Ուսերի վրա, նույն որակի, դեղին գույնի զուգահեռ երեք նեղ հորիզոնական գոտիներ են արված, որոնցից դեպի ներքև եռանկյունիներ են իջնում։ Նրանց միջև ընկած կարմիր գույնի տարածությունները, ըստ երևույթին, կազմում են լոտոսի ծաղկի լայն, սրածայր պսակաթերթիկներ։

Երկրորդ անոթը ավելի երկարաձիգ է, նեղ ու բարձր վզով (չափերը՝ 24×11 սմ)։ Նույնպես ծածկված է մուգ կարմիր ներկով, բայց ավելի ցածրորակ. հորիզոնական զուգահեռ գոտիները, ինչպես և տերևանման զարդերի միջև ընկած տարածությունները սպիտակավուն դույնով են արված, որից քիչ բան է պահպանվել։

Հետաքրքիր է նշել, որ Վրաստանի պատմական թանգարանում, Ուվարովների Արմավիրբլուրի պեղումների նյութերի շարքում, պահվում է մի հաստապատ, զանգվածային անոթ՝ ուսերը և շուրթը վնասված[8]։ Սակայն անոթի պահպանված մասն էլ բավական է, որպեսզի այն դասվի վերոհիշյալների շարքին։ Սա նույնպես բարձր է և ունի տափակ հատակ՝ աստիճանաբար դեպի վերև լայնացող պատերով (չափերը՝ 21,5×12,5 սմ)։ Կավը ավազախառն է, նույնիսկ, մանր քարեր է պարունակում, իսկ թրծումը՝ անբավարար։ Հետաքրքիր է նշել, որ անոթի վրա ներկի ոչ մի հետք չի երևում։ Հնարավոր է, որ այն գունազարդված չի եղել։ Այս հանգամանքը ընդգծում է նրա նշանակությունը նման անոթների գունազարդ խմբի ուսումնասիրության համար, քանի որ այդօրինակ հասարակ կավանոթների առկայությունը կարող է ամբողջ խմբի տեղական ծագման օգտին խոսել։

Նման անոթների ճիշտ թվագրումը բավականին դժվար է։ Պետք է խոստովանել, որ, ընդհանուր առմամբ, սրանց ձևը հինարևելյան է, թերևս ուրարտական ծագմամբ։ Սակայն ուրարտական խեցեղենը ծանոթ է և նրա մեջ կարող են հանդիպել միայն հեռավոր նմանություն ունեցող

---

[4] A. Stein, Old routes of Western Iran, London, 1940, Տխտ. XXI, 1, էջ 247։

[5] Նույն աշխ., տխտ. XVII, 9. էջ 297։

[6] R. Ghirshman, Arte dell' Iran presasanide, Le civilta dell' Oriente, vol. IV Roma, 1962, էջ 362։

[7] Ս. Տեր-Հակոբյան, Արմավիր երկրորդ նորագյուտ արձանագրությունը, Նյութեր Հին Հայաստանի պատմության, Երևան, 1935, էջ 149, նկ. 2։

[8] Տե՛ս Վրաստանի թանգարանի ֆոնդերը, № 2932։

ներ. էլ չենք ասում նման գունազարդման մասին, որը ծանոթ չէ Ուքարտուի վարպետներին։

Ճիշտ է, եթե հաշվի չառնենք հին Եգիպտոսը, որի խեցեղենը, հատկապես հնագույնը հարուստ է այդօրինակ ձևերով, ապա հատուկենտ նման անոթներ հանդիպում են Հայաստանի հարևան երկրներում, առանձնապես Ասորեստանում, որոնք սակայն բավարար հիմք չեն կարող ծառայել մեր նյութի Ճիշտ թվագրման համար։ Թվագրման համար կարևոր կովանոցներ մեզ տալիս են Արմավիրի պեղումները։

1963 թ. բլրի արևմտյան լանջում, արևմտյան պարսպից ոչ շատ հեռու՝ 0,90 մ խորության վրա գտնվեց մի բեկոր բուն շերտից։ Այն նուրբատիպ անոթի վզի, ուսերի և իրանի մի մասն է, թայլ այրի է ընկնում իր գունազարդությամբ, ինչպես նաև պատրաստման տեխնիկայով, որոնք, անկասկած, համապատասխանում են վերոհիշյալ խմբի հատկանիշներին[10]։

Այս բեկորի նշանակությունը հատկապես կարևոր է շերտագրական տվյալների տեսակետից։ Շերտագրական միջավայրը, որի մեջ գտնվել է հիշյալ բեկորը, միանգամայն կարող է վերաբերվել հելլենիստական կամ քիչ ավելի վաղ ժամանակաշրջանին։ Այդ մասին են խոսում գոտեղարդ բազմաթիվ բեկորները, անզարդ խեցեղենի շրթերի բեկորները, քարե թասերի բեկորները, որոնք ուղեկցում են տվյալ շերտում վերոհիշյալ առարկային։ Հատկանշական է այն նմանությունը, որը նկատվում է մի շարք ուղիղ և ալիքավոր գունավոր գոտիներով զարդարված և նույն շերտից գտնվող բեկորների և Փոքր Ասիայի Ալիշար բլուրի նույնանման խեցեղենի միջև։ Վերջինս, պեղողների կարծիքով, թվագրվում է Ն. մ. թ. I հազարամյակի երկրորդ կեսով[11]։

1964 թ. միջնարերդի հյուսիսային պարսպի տակ գտնված բեկորը[12], իսկ հաջորդ տարիներին միջնարերդի արևմտյան տեղամասում հայտնաբերված ամբողջական նմուշները անհերքելիորեն ապացուցեցին պատմական թանգարանի երկու անոթների կապը Արմավիր բլուրի հետ։

Ի վերջո, հիշենք նաև այն նմանությունը, որը նկատվում է արմավիրյան վերոհիշյալ անոթների և հելլենիստական ժամանակաշրջանի եգիպտական մի շարք անոթների միջև։ Սրանք պահվում են Կահիրեի թանգարանում, և իրենց ձևով հիշեցնում են արմավիրյան անոթներին. վերջիններիս նման սլացիկ են, տափակ հատակով և ոչ շատ ընդգծված շրթերով։ Հետաքրքիր է նշել, որ հելլենիստական այս օրինակների վրա կան լոտոսի պակաթերթիկների ռելեֆ զարդեր, որոնք դնեցված են անոթի վարի մասում[13]։

Հիշատակված բոլոր հանգամանքները թույլ են տալիս բննության առնված երկու անոթը և Արմավիրի միջնարերդում հայտնաբերված ամբողջ խումբը (ինչպես ամբողջական անոթները, այնպես և բեկորները), վերագրել Աքեմենյան կամ, ավելի ճիշտ, վաղ-հելլենիստական ժամանակաշրջանին։ Դժվար է որոշել, թե նման անոթները ինչ նպատակի են ծառայել, բացառված չէ, որ եղած լինեն ծաղկամաններ։ Այդպիսիներ հանդիպում են միկենյան որմնանկարներում, ուր նշմարվում են շրեղ կավանոթներ և նրանց մեջ դրված լոտոսի և այլ ծաղիկների պատկերներ[14]։

---

[9] Հնարավոր նմանություն կա Իրանի Թեփե Սիալքի երկու անոթների (մոտավորապես 3000 թ. Ն. մ. թ., բարձրությունը 17 սմ և 22 սմ) և Արմավիրի անոթների ձևերի միջև (R. Ghirshman, Fouilles de Sialk, Paris, 1938, հ. I, տխտ. 5, 6)։ Ավելի ակնհայտ է թվում Ասորեստանյան մի շարք կենտրոններում՝ Աշշուրում, Նիմրուդում և Թել-Հալաֆում պեղված անոթների նմանությունը բննության առնված նմուշների հետ. (A. Haller, Die Gräber und Grüfte von Assur, Wissenschaftliche Veröffentlichungen der Deutschen Orientgesellschaft, B. 65, Berl., տխտ. 21—25 և այլն։ B. Hrouda, Tell-Halaf, Berlin, 1962. B. IV, տխտ. 56—13։ J. Oates, Late assyrian pottery from fort Salmanasar, Iraq, հ. XXI. p. 2, 1959։ տխտ. 38, 90)։ Սակայն Արմավիրի անոթներին հատուկ գունազարդության և ո՛չ մի օրինակ այդ խեցեղենի մեջ չի հանդիպում։

[10] «Պատմա-բանասիրական հանդես», 1965, № 3, տխտ. I, 5, էջ 276։

[11] H. H. von der Osten, E. Schmidt, The Alishar Hüyuk (Season of 1930—1932), մաս III, տխտ. II—IV։

[12] «Պատմա-բանասիրական հանդես», 1965, № 3, տխտ. I, 7, էջ 276։

[13] Die Griechisch-agyptische Sammlung E. von Sieglin bearbeitet von R. Pagenstecher, Leipzig, 1913, (Expedition E. v. Sieglin) հ. II, մաս III, նկ. 92 a, b։

[14] A. Jolles, Die ägyptisch-mykenischen Prunkgefasse, Jahrbuch d. Deutschen Archäologischen Instituts, h. 23. 1908, Berlin, 1909, նկ. 3 և այլն, էջ 212 և հաջորդ։ Պետք է սակայն ասել, որ պատկերված անոթներից և ոչ մեկը նման չէ Արմավիրի օրինակներին։

№ 766/127 և № 766/129 փոքր սափորները բերված են Էջմիածնի թանգարանից (տախտակ I, 4,5)։

№ 766/129 մի կանթանի սափորիկ է, հարթ հատակով, ուռուցիկ փորով, նեղացող վզով և լայնացող շրթով (չափերը՝ 11,5×8 սմ)։ Կանթը աղեղնաձև է և ձգվում է շրթից մինչև փորը։ Այն պատրաստված է մաքուր կավից, անգոբապատված է դեղնագույն շերտով և լավ թրծված։ Անոթի վերևի մասը ծածկված է լավ փայլեցրած կարմրավուն-սրճագույն ներկով։ Փորի ներքևի կեսում նույն գույնով զիգզագաձև գոտի է արված, իսկ հատակին՝ խաչաձև զարդ։

№ 766/127 նույն ձևի անոթ է, քիչ ավելի մեծ, քան նախորդը և կանթի փոխարեն ունի փոքրիկ ունկ՝ անցքով (չափերը՝ 13×10 սմ)։ Անոթը ուսերի վրա երեք շրջակենտրոն ակոսավոր նեղ դոտիներ ունի։ Շուրթը, վիզը և ուսերը նախորդ անոթի նման նույն գույնով են պատած, իսկ փորի մասը՝ բաց դույնի անգորի վրա արված զիգզագաձև դոտիով է զարդարված։ Հատակը նույնպես խաչաձև զարդ ունի։

Այս սափորների ճիշտ թվագրումը դժվար է։ Որոշ կողմնորոշող տվյալներ տալիս են Ջրաոատի և Աքարբեկյանի[15], Ծալկայի (Կուշչիի)[16], թերևս Շամշադինի[17] նյութերը։ Սրանց մեջ հանդիպում են սափորներ, որոնք իրենց ձևերով և չափերով, թվում է, մոտ են կանգնած նկարագրված անոթներին (նույն տափակ հատակները, ուռուցիկ փորերը, նեղ վզերը, շեփորաձև բերանները, աղեղաձև կանթերը)։

Քանի որ վերոհիշյալ նյութերը թվագրվում են 5—4-րդ դարերով, թանգարանի երկու սափորները հնարավոր է վերագրել նույն ժամանակաշրջաններին։

Նույն տիպի զարդեր, քիչ ավելի մուգ գույնով արված, ունեն երկու այլ անոթներ, բերված նույնպես Էջմիածնի թանգարանից, որոնք ըստ գույքամատյանի տվյալների գտնված են Աստարադում։

№ 556/16 թեյնիկաձև անոթ է, դուրս ցցված քթով, որը իր ձևով շատ մոտ է կանգնած ուշ բրոնզի կամ վաղ երկաթի նույնատիպ անոթներին։ Արտաքինից այն գրեթե ամբողջությամբ պատած է կարմիր ներկով, նույն որակի և համարյա նույն երանգի, ինչ նախորդ երկու սափորները։

№ 556/12 փոքր քրեղան է, որը ունի սափորներին նման դոտեզարդեր։

Եթե զարդանախշերի, դույների որակի, հատկապես կավի բաղադրության, կավի գույնի և թրծման նմանությունները պատահական չեն, ապա երկու անոթները նախորդների նման նույն ժամանակաշրջանին պետք է վերաբերեն։ Ճիշտ է, նրանց ձևերը շատ արխաիկ են, սակայն մեզ հայտնի են օրինակներ, երբ հին ձևերը երկար ժամանակ հարատևում են (օր. Ադրբեջանի Ցալոշլու թեփեի մշակույթը)։ Վերոհիշյալ թվագրումները, սակայն, վերջնական չի կարելի համարել։ 1951 թ. Թբիլիսիի պատմական թանգարանին հանձնվել է մոտ 50 առարկաներից բաղկացած մի հավաքածու, որը ծագում է հին Ջուղայից և գտնվել է 1905 թ. երկաթգծի շինարարության ժամանակ քանդված դամբարաններում։ Այս հավաքածուի խեցեղենի մեջ հանդիպում են նույն օրինակ փոքր քրեղաններ և թեյնիկանման անոթներ, որոնք ծածկված են նույն գույնով և փայլով, ինչպես վերևում քննության առված անոթները և ունեն հար ու նման զարդեր։ Հնագետների կարծիքով, վերոհիշյալ հավաքածուի մետաղյա իրերը թվագրվում են II հազարամյակով, 10—8-րդ դարերով և 6—5-րդ դարերով մ. թ. ա., ուստի մեզ հետաքրքրող կավանոթները հնարավոր է կապել մետաղի՝ ժամանակագրական խմբերից որևէ մեկի հետ, մի հանգամանք, որը բարդացնում է նրանց վերջնական թվագրման հարցը։

Պետ. Էրմիտաժի ուրարտագիտական կաբինետում պահվում է մի փոքրիկ թաս Խոջալիից (Լեռնային Ղարաբաղ), որը ծածկված է գոտիներից կազմված նույնատիպ զարդերով։

№ 1785—6 փոքր սափոր է, որի գտնված տեղը անհայտ է և բերված է Էջմիածնի թանգարանից (տախտակ I, 6)։ Այն մի կանթանի անոթ է շրջանաձև, ցածր ոտքի վրա, ուռուցիկ փորով, թեք ուսերով, կարճ վզով, դեպի դուրս ցցված հաստ շրթերով (չափերը՝ 11×10 սմ)։ Կանթի մի ծայրը շրթին է ամրացած, մյուսը, որը ձևավոր է, ուսին։

---

[15] А. О. Мнацаканян, Г. А. Тирацян, Новые данные о материальной культуре Древней Армении. «Տեղեկագիր», (հաս. գիտ.), 1961, № 8, տխտ. 3։

[16] Б. А. Куфтин, Археологические раскопки 1947 года в Цалкинском районе. Тбилиси, 1948, Տխտ. III.

[17] А. С. Есаян, Погребения VI—V вв. до н. э. в горах Шамшадина, «Советская» Археология», 1965, № 3, նկ. 2։



Sufunuh I

Սափորիկը դեղին գույնի անգորով է պատած, որի վրա երկգույն զարդանախշեր են արված. կարմիր գույնի, հորիզոնական, նեղ գոտիները հերթափոխվում են մուգ-սրճագույն՝ սևին տվող ալիքաձև և շղթայաձև գոտիներով։ Փորի ներքևի կեսը զարդարված է եռանկյունիներով, դագաթները դեպի ներքև, եզրերը մուգ սրճագույն, իսկ ներսի մասը կարմիր։

Զարդանախշերը, ինչպես դույնով, այնպես էլ ձևով, նման են Կարմիր բլուրի քաղաքային թաղամասի Ն. մ. թ. 3—4-րդ դարերի դամբարանից պեղված «հաղորդակցվող» անոթի զարդերին, որոնք բաղկացած են կարմիր և մուգ սրճագույն ուղիղ և ալիքավոր գոտիներից՝ դեղին ֆոնի վրա[18], ինչպես նաև Արմավիր բլուրում 1962 և 1963 թթ. հայտաբերված կիսագնդաձև թասի զարդերին[19]։

Նկ. 1

Նկ. 2

Գագաթները դեպի ներքև ուղղված եռանկյունիներից կազմված գոտիներ հանդիպում են ուշ-փոյուգիական, 6-րդ դարի կեսերով թվագրվող Սինոպ քաղաքում և այլ տեղերից հայտաբերված խեցեղենի վրա[20], ինչպես նաև Դվինի վաղ հայկական և հելլենիստական շերտերում գտնված գունազարդ խեցեղենի վրա։ Շղթայաձև նման գոտի հանդիպում է Ուվարովների և Երիցյանի կողմից՝ Արմավիր բլուրում պեղված կիսագնդաձև թասի ներսի մասում, որը, հավանաբար, թվագրվում է հելլենիստական ժամանակաշրջանով։ Հիշատակված զուգահեռները ցույց են տալիս, որ ուղիղ և ալիքավոր գունավոր գոտիների համադրությունից ստեղծված նախշերը հանդիպում են 6—4-րդ դարերի խեցեղենի վրա, սակայն նյութի ամբողջական և բազմակողմանի

---

18 А. А. Мартиросян, Город Теншебаини, Ереван, 1961, նկ. 66։

19 «Պատմա-բանասիրական հանդես», 1965, № 3, տխտ. I, 4, էջ 277, թասը ամենայն հավանականությամբ թվագրվում է վաղ հելլենիստական ժամանակաշրջանով։

20 B. Akurgal, Phrygische Kunst, Ankara, 1955. տխտ. 33։ E. Akurgal H. Budde, Vorläufiger Bericht über die Ausgrabungen in Sinop. Ankara, 1956, տխտ. III.

բննությունից երևում է, որ այն ամենևին բնորոշ չէ միայն նշված ժամանակաշրջանի համար. այլ հանդիպում է ինչպես նախորդ, այնպես և հաջորդ դարերում՝ հասնելով մինչև մ. թ. առաջին դարերը[21]։

Այս հանգամանքը, ինչպես նաև անոթի ձևը, թույլ են տալիս այն թվագրել վաղ-հելլենիստական ժամանակաշրջանով[22]։

№ 302 սափորիկը բերված է Քյոյագրանից (տախտակ I, 7)։ Այն տափակ, լայն հատակով անոթ է, լավ հնավորված, եռաթևերթ պսակով և փոքր կանթով՝ դրսի կողմից ակոսով (չափերը՝ 12×12)։ Պսակի երկու կողմից կավե կոնական զարդեր են կպցված։ Անոթը դրսից ծածկված է դեղնավուն անգորի շերտով։ Մի լայն, մուգ կարմիր դույնի գոտի անցնում է ուսերի և փոքր վերևի մասով։ Կարմիր դույնի թեք գծեր են հանդիպում կանթի և շրթի վրա[23]։

Թեպետ առաջին հայացքից անոթը հիշեցնում է Դաոնիի առաջին դարերի դամբարանների նյութերը, այնուամենայնիվ, ավելի հավանական է, որ այս անոթը ևս թվագրվում է հելլենիստական ժամանակաշրջանով։ Այդ մասին են խոսում լավ արտահայտված օյնոխոյաձև շուրթը և խնամքով արված գոտին։ Հետաքրքիր է նշել, որ այդպիսի լայն գոտիներ հանդիպում են ուշ փոյուգիական կավանոթների վրա, որոնք[24] թվագրվում են Ն. մ. թ. 6-րդ դարով։

№ 1331 և 1332-ը ծորակավոր անոթների երկու բեկորներ են, մեկը եռադույն զարդերով[25], մյուսը՝ պարզապես գոտեզարդ (տախտակ I, 9)։ Սրանք, անկասկած, այն իրերն են, որոնք պատահաբար հայտնաբերվել են Հոկտեմբերյանի շրջանի նոր Արմավիր գյուղում։

Գտնելու հանգամանքների նկարագրությունից երևում է, որ բեկորները հայտնաբերվել են հնադույն բնակավայրերի ինչ-որ մի մեծ, ավերված շենքում, որի պատերի ներքևի շարքերն էին պահպանված[26]։ Շենքի չափերից (12 մ×9մ), պատերի հաստությունից (1,65 մ) և շինարարական տեխնիկայի առանձնահատկություններից (մեծ անտաշ քարեր, առանց շաղախի) ելնելով եզրակացնել, որ այն ուրարտական ժամանակաշրջանին է պատկանել։ Բեկորները, ինչպես նաև եռոտանի մի գոհասեղան, գտնվել են 0,75 խորության վրա, հիշատակված հին շենքի մեջ՝ գյուղում շինարարության համար քարերը հանելիս։ Նշված խորությունը մի ակնարկ է այն մասին, որ գտնված առարկաները կամ ժամանակակից են շենքին, կամ, որ ավելի հավանական է, նրանից ուշ են։ Ն. Բայբուրդյանը, որը առաջինն է անդրադարձել գյուտերին, գրում է, որ գունազարդ բեկորը բազմագույն խեցեղենի առաջին նմուշն է Հայաստանում և որ այն պետք է թվագրել բրոնզե դարով[27]։ Բայբուրդյանի հետ համամիտ է նաև Բ. Բ. Պիտրովսկին[28]։ Բ. Ա. Կուֆտինը առանձնացնում է վերոհիշյալ բեկորը մի շարք այլ, ըստ նրա կարծիքի, նմանօրինակ գունազարդ նմուշների հետ, առանց վերջնական խոսք ասելու դրանց թվագրման մասին[29]։

Ծորակավոր այս բեկորների մեջ նկատվում են իրանական խեցեգործության ազդեցությունը որոշ հետքեր (Թեպե Սիալք—Բ)։ Ծորակների յուրահատուկ ձևը, սակայն, այդ բեկորները կապում է իրանական այն անոթների հետ, որոնց ծորակները ուղղահայաց ուղղվածություն ունեն և կարճ են։ Սուզում և Թալ-ի-Ջալարգում գտնված երկու բեկորները (մեկը՝ 7—6-րդ դարերի, մյուսը՝ 11—10-րդ) իրենց ծորակների ձևով ու գիրքով կարելի է բնության առնված խմբի տիպարանական նշանակություն համարել[30]։ Ինչ վերաբերում է արևմտյան կավանոթներին, ապա նրանց

---

21 «Պատմա-բանասիրական հանդես», 1965, № 3, էջ 274։

22 Տե՛ս նաև Ա. Դ. Խաչատրյան, Հայաստանում գտնված գունազարդ խեցեղենի մի քանի նմուշներ, ՊԲՀ 1966, № 1, էջ 254 (աղյուս. I, 2)։

23 Նույն տեղում, տախտ. I, 3, էջ 255։

24 E. Akurgal, նշվ. աշխ., տախտ. 33; E. Akurgal, L. Budde՝ նշվ. աշխ., տախտ. II.

25 «Տեղեկագիր», (հաս. գիտ.), 1963, № 12, նկ. 6, էջ 108—109։

26 Е. Байбуртян, Археологические находки, «Коммунист», № 69, 1936, № 69, 1936, էջ 4 և նույնի «Հայաստանի գունազարդ կերամիկայի պրոբլեմը, ՀՍՍՀ պատմության և գրականության ինստիտուտ, «Տեղեկագիր», II գիրք, Երևան, 1937, էջ 291—292 և 296։

27 Նույն տեղում, էջ 291—292, 296։

28 Б. Б. Пиотровский, Археология Закавказья, Л., 1949, էջ 50.

29 Б. А. Куфтин, Урартский колумбарий у подошвы Арарата и куроараксинский энеолит, Вестник Музея Грузии, XIII—В, 1944, էջ. 23, 95—96, նկ. 20, 43, 52, տախտ. XVIII, 1, 2։

30 R. Ghirshman, Village perse—achéménide, Paris, 1954, տախտ. XIII, 2, XXXII, L. Vanden, Berghe, Archeologie de L'Iran ancien. Leiden, 1959, տախտ. 61a, էջ 44։

ծորակները նման ուղղահայաց դիրք ունեն, կպչում են անոթի շրթին և եռաթերթաձև բերան ունեն, բայց ավելի երկար են[31]։

Վերջին տարիների Արմավիր բլրի և Գառնիի պեղումները որոշակիորեն ցույց են տալիս, որ նման ծորակով անոթները կարելի է թվագրել հելլենիստական կամ քիչ ավելի վաղ ժամանակաշրջանով։

Դվինի ստորին շերտերի գունազարդ խեցեղենը, որը, ամենայն հավանականությամբ, վերաբերում է վաղ հայկական և հելլենիստական ժամանակաշրջանին, ծորակավոր գունազարդ բեկորի նման զարդամոտիվներ ունի (եռանկյունիներ, ծաղկաշղթաներ, ցանցաձև օրնամենտ)։ Այդպիսի մոտիվներ են հանդիպում նաև ուշ փոյուդիական (եռանկյունիներ[32]), ուր իրանական[33], և հելլենիստական[34] (ցանցաձև օրնամենտ) խեցեղենի վրա։

№ 1393 փոքրիկ թասը և № 1934 և 1935 երկու բեկորները բերված են Արտաշատի շրջանի Աղբաշ գյուղից (տախտակ I, 9,11)։ Թանգարանի մատյանում նշված է, որ այս իրերը դամբարանային ծագում ունեն։ Թասը ունի տափակ հատակ, թեք պատեր, ուղղահայաց պսակ (չափերը՝ 9,5×2 սմ)։ Այն ծածկված է բաց դույնի անգորով, իսկ ներսում, հատակին, երկդույն՝ սև և կարմիր խաչաձև զարդ է արված։ Նույն գույնի գծիկներ կան նաև շրթի վրա[35]։ Վերոհիշյալ բեկորները նույնպես բաց գույնի, դեղին անդորով են ծածկված, իսկ զարդերը սրճագույն, սև և սարմիր դույնի են։ Մի բեկորը (№ 1394) երկու կողմից է գունազարդված։ Պետք է նշել նաև, որ Գառնիի մի դամբարանում, որի մեջ, ի թիվս այլ առարկաների նաև Ալեքսանդր Մակեդոնացու դրամը կար, գտնվել է գունազարդ մի փոքր թաս, ներսից խաչաձև օրնամենտով, իսկ պսակի վրա գծիկներով[36], որը կարևոր կռվան է Աղբաշի թասը վաղ հելլենիստական ժամանակաշրջանով թվագրելու համար։ Նման մի թասի բեկորներ հայտնի են նաև Դվինի միջնաբերդի վաղ հայկական և հելլենիստական շերտերից։

№ 515 թասի մասին ասված է, որ գտնվել է Խաչիկ Դաղյանի պեղումների ժամանակ (տախտակ I, 10)։ Այն նույնպես տափակ, փոքր հատակ ունի, թեք պատեր, ուղղահայաց պսակ և հաստ, դեպի դուրս ցցված շրթեր։ Թասը կարմրավուն մակերես ունի։ Հատակին, ներսից, կարմիր դույնով խաչաձև զարդ է արված։ Այս իրը, հավանաբար, վերևում հիշատակված թասերի կարգին է պատկանում, որոնց հետ աղերսվում է նաև իր գունավոր խաչաձև զարդով (չափերը՝ 14×3 սմ)։

Հայաստանի տերիտորիայից են ծագում երկու գունազարդ կավանոթների բեկորներ և մի տափաշիշ, որոնք այժմ պահվում են Վրաստանի պատմական թանգարանում։

Երկու բեկոր, որ կիսագնդաձև մի անոթի մաս են կազմում, հիշատակված են Ուվարովների կատալոգում[37] և հրատարակված են Բ. Ա. Կուֆտինի կողմից[38]։ Դրսից ըմպանակը ծածկված է կարմիր դույնի ներկով և փայլեցրած է։ Ներսից, անոթը նույնպիսի շերտով է ծածկված և ունի սև դույնով իրար մեջ գծած զույգ կիսաշրջանակների մի շարք, որի տակով անցնում է սև և կարմիր գույներով արված շղթայաձև մի գոտի։ Անոթը պատրաստվել է մաքուր կավից և լավ է թրծած։

Բ. Կուֆտինը, որ հատուկ ուշադրություն է դարձրել այս անոթին, որոշակիորեն չի թվագրում, համարելով այն հին և հելլենիստական ժամանակաշրջանի կիսագնդաձև ըմպանակների նախորդ[39]։

---

[31] R. Ghirshman, նշվ. աշխ., տխտ. XXIV, 6: E. Schmidt, Persepolis II, Chikago, 1957, տխտ. 71,4; 7 2,11; 73,1, 89,5.

[32] E. Akurgal. նշվ. աշխ, տխտ. 33, Akurgal, L. Budde, նշվ. աշխ., տխտ. III.

[33] R. Ghirshman, նշվ. աշխ.։

[34] Э. Р. Фон Штейн, К вопросу об эллинистической керамике, Записки императорского Одесского Общества истории и древностей, հ. XXVII, Одесса, 1910, Տխտ. V, 13, Т. Н. Книпович, Из истории художественной керамики северного Причерноморья, Советская Археология, VIII, նկ. 8։

[35] Ժ. Դ. Խաչատրյան, նշվ. աշխ., տխտ. 2, 1։

[36] «Պատմա-բանասիրական հանդես», 1965, № 3, տխտ. XXV, 1, էջ 267։

[37] Museum Caucasicum, т. V, Коллекция Кавказского Музея, Археология, Тифлис, 1902, № 2908—2910.

[38] Б. А. Куфтин. նշվ. աշխ., նկ. 20,

[39] Նույն տեղում, էջ 95։

Մեր կարծիքով, անոթի ձևը, գունազարդության առանձնահատկությունները, այնուամենայնիվ, թույլ են տալիս վերոհիշյալ իրը թվագրելու վաղ-հելլենիստական ժամանակաշրջանով։

Այս անոթի ուսումնասիրման կապակցությամբ Բ. Կուֆտինը՝ զուգահեռներ է անցկացնում սրա և Դիրաքյարի կիսագնդաձև բմպանակի միջև[40], որը պատրաստված է ոչ շատ մաքուր խավից և անհամաչափ է թրծված։ Ներսից և մասամբ գրսից բմպանակը պատած է կարմիր գույնի ներկով կամ անգորով։ Այն գունազարդված է ներսից սև գույնի զույգ՝ իրար մեջ գծած կիսաշրջանակներով (ֆեսառներով), այիրաձև և ուղիղ գծերով, և օղակաձև զարդերով։ Արմավիրի վերջին տարիների պեղումները հիմք են տալիս վերջնականապես այսօրինակ թաս-բմպանակները վերագրել հետուրարտական ժամանակաշրջանին[41]։

Դիրաքյարի բմպանակը իր մի շարք առանձնահատկություններով, հատկապես կիսագնդաձևով, արտաքին մակերեսը ներկով պատելու եղանակով՝ կապվում է հելլենիստական նույնատիպ անոթների հետ, թեպետ գունազարդման եղանակը և զարդանախշերը հիշեցնում են II հազարամյակի սկզբների գունազարդ խեցեղենը՝ առավելապես Թազաբենդի խեցեղենի առանձնահատկությունները։

Բազմագույն տափաշիշը, որը պեղել է Ե. Լալայանը Նախիջևանի Քյուլթեփեի վերևի շերտերի դամբարանից, նույնպես դժվարությամբ է թվագրվում[42]։

Տափաշիշը փոքր է, մի կողմը՝ ուռուցիկ, մյուսը՝ տափակ (չափերը՝ 18×20 սմ)։ Ուռուցիկ մասի վրա սրճագույն, վեց անկյունի մի աստղ է պատկերված։ Աստղը եզերված է երեք զուգահեռ գծերով, մեջտեղինը՝ սրճագույն, դրսինները՝ մոխրագույն, որոնք հիշեցնում են Արմավիրում, 1962 թ. գտնված մի բեկորի գունազարդումը։ Աստղի թևերի միջև ընկած տարածության վրա պատկերված են ոճավորված թռչուններ, մտրմիններ՝ սրճագույն, պոչը, գլուխները և կտուցը՝ մոխրագույն։ Սրճագույն, նեղ մի գոտի անցնում է անոթի ամենալայն մասով, կանթերի վրայով, շրթերի տակով և վրայով։ Գունագարդումը կատարված է դեղին ֆոնի վրա։ Որոշ նմանություն է նկատվում տափաշիշի և Դվինի վաղ հայկական և հելլենիստական գունագարդ խեցեղենի միջև։

Տափաշիշի թռչունները հեռավոր կերպով հիշեցնում են Սուզա (Շոշ քաղաքի) 7—6-րդ դարերի գունագարդ խեցեղենի նույնանման մոտիվները, իսկ գունազարդ աստղը՝ մ. թ. ա. 4—2-րդ դարերով թվագրվող Խորեզմում պեղված մի տափաշիշի ուլեֆ գծերով արված վեցանկյուն աստղը[43]։ Այս կապակցությամբ հարկ է նշել, որ Քյուլթեփեի տափաշիշի Կուֆտինի նշված զուգահեռները[44] պատահական են թվում և համոզեցուցիչ չեն։

Վերջապես, պետք է հիշատակել մի մեծ, գունազարդ անոթի բեկորներ, որոնք գտնվել են Իզդիրի մոտակայքում, Պետրովի կատարած պեղումների ժամանակ[45]։ Մի բեկորի երկարությունը 40 սմ է։ Պահպանվել են անոթի միայն պատերի մասերը։ Գունազարդումը երկգույն է՝ սև և կարմրավուն՝ մոխրագույն ֆոնի վրա։ Պատկերված են գույզ՝ իրար մեջ գծած կամարաձև զարդեր, ներսում՝ ճյուղեր և ողկույզանման զարդեր։ Անոթը հաստապատ է (1 սմ), կավը համեմատաբար մաքուր է, բայց թրծումը այնքան էլ որակով չէ։ Բեկորների մակերեսը և առավելապես գունավոր մասերը փայլեցված են։

Այս անոթի թվագրումը ևս որոշակի դժվարությունների է հանդիպում։ Միայն կարելի է ասել այնքան, որ այն չի ծագում ոչ ուրարտական և ոչ էլ վաղբրոնզեդարյան շերտից, այլ հայտնաբերվել է մեկուսի վիճակում, բայց մի միջավայրում, որտեղից հռոմեական դրամներ են գտնվել։ Զարդանախշերի որոշ մոտիվներ, այսպես կոչված ողկույզները, հիշեցնում են նոր Արմավիրի ծորակավոր, գունազարդ բեկորը[45], ինչպես նաև Դվինի գունազարդ խեցեղենը։

---

40 Ե. Բայբուրդյան, նշվ. աշխ., նկարը, էջ 288, տե՛ս նաև էջ. 291։

41 «Պատմա-բանասիրական հանդես», 1965, № 3, էջ 277։ Բացառված չէ, որ նույն ժամանակով է թվագրվում և Բուզդաշենի թասը, Ե. Բայբուրդյան, նշվ. աշխ., նկարը, էջ 288։

42 Ե. Լալայան, Նախիջևանի ոստիկանական շրջան կամ Նախճավան։ «Ազգագրական հանդես», 8, № 1, 1906, էջ 207—208, նույնի Археологические раскопки в Эриванской Губернии, «Известия Археологической Комиссии», прибавление к выпуску № 14, 1905, ст 48. Б. А. Куфтин, նշվ. աշխ., նկ 52, տխտ. XVIII, 2։

43 R. Ghirshman, նշվ. աշխ., տխտ. XIII, XX, XXII—XXIV, М. Г. Воробьева, Керамика Хорезма, М., 1959; „Труды Хорезмской археолого-этнографической экспедиции", հ. IV, ն. 12, 31, նկ. 16։

44 Б. А. Куфтин, նշվ. աշխ., ծանոթ. 162։

45 Նույն տեղում, նկ 43, տխտ. XVIII, 1։

46 «Տեղեկագիր», (հաս. դիտ.), 1963, № 12, նկ. 6։

Ոչ զուգահեռների կարելի է հանդիպել Ալիշար Հույուքի հետհեթիթական-փյուգիական դուն. Նազարդ խեցեղենում, որի վրա պատահում են կամարաձև նման զարդեր[47]։ Այդ կարգի զարդեր բայց զգալի չափով վերափոխված. կարելի է հանդիպել նաև հելլենիստական ժամանակաշրջանի խեցեղենի վրա[48]։

Ցնայած հիշված զուգահեռների մի մասը մատնանշում են ավելի վաղ թվագրում. սակայն Արմավիրից, Գառնիից և Դվինից գտնված գունազարդ խեցեղենը թույլ է տալիս Իգդիրի նշված բեկորները վերագրել հետուրարտական ժամանակաշրջանին։

№ 1022—19 գոտեզարդ բեկորները գտնվել են Սովետական Հայաստանի տերիտորիայի զանազան վայրերից 1930-ական թվականներին, հնությունների պահպանության կոմիտեի արշավախմբի աշխատանքների ընթացքում (ղեկավար ակադ. Ի. Մեշչանինով)։ Շատ հավանական է, որ այդ բեկորները վերաբերում են հելլենիստական ժամանակաշրջանին։

Քննության առնված հավաքածուի մեծ մասը թվագրվում է վաղհայկական և առավելապես հելլենիստական ժամանակաշրջանով, մի հանգամանք, որը ընդգծում է նրա նշանակությունն ու արժեքը՝ Հայաստանի նյութական մշակույթի պատմության այդ ժամանակաշրջանը (Ն. մ. թ. VI—I դդ) սակավ ուսումնասիրված լինելու պատճառով։

Կավանոթների ձևերի ու գունավոր զարդերի բազմազանության մեջ, խեցագործության տեղական արտադրանքի համեմատաբար բարձր հնարավորությունները դրսևորելուց բացի, հավաքածուն արտացոլում է նաև հարևան մի շարք երկրների հետ ունեցած ակնհայտ աղերսները, որոնք բնորոշ են հին հայկական մշակույթի համար։

ДРЕВНЕАРМЯНСКАЯ РАСПИСНАЯ КЕРАМИКА

Г. А. ТИРАЦЯН

Резюме

Рассмотренные в настоящей статье расписные сосуды долгое время оставались неопознанными и неопределенными. Благодаря раскопкам в Гарни и Армавире, а также путем привлечения сравнительного материала из сопредельных с Арменией стран, удается датировать основную часть коллекции раннеармянским и, главным образом, эллинистическим временем, что придает этим находкам особое значение ввиду малоизученности отмеченного периода (VI—I вв. до н. э.) истории материальной культуры древней Армении.

Разнообразие форм сосудов, а также росписи, позволяет, с одной стороны, говорить о сравнительно высоком уровне гончарного дела древней Армении, а с другой — выявить культурно-исторические связи, характерные для древнеармянской культуры в рассматриваемое время.

---

[47] H. H. von der Osten. Alishar-Huyuk, Season of 1930—1932, Chicago, 1937 մաս II, նկ. 410 (e 871, e 1418, e 1346), նկ. 412, (d 2000), նկ. 445, 7, 8, Տխտ. III, 10, VII, նաև E. Akurgal, նշվ. աշխ., նկ. 27, 29։

[48] Griechische Altertümer Südrussischer Fundorts aus dem Besitze des Herrn A. Vogel,. Kassel, 1908, տխտ. VI, 28.